ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1964 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ս. Վ. Բուռնազյան

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐՄԵՐԸ XII—XIV ԴԴ.

Իրավունքը և դատարանները XI—XII դդ.

Ինչպես հայտնի է, XI—XII դդ. Կիլիկիայի Ռուբինյան հայ իշխանները պայքարում էին մի կողմից օտար տիրապետության դեմ՝ լիակատար անկախություն ձեռք բերելու և մյուս կողմից շարունակում էին պայքարը հայ մյուս ֆեոդալական տների դեմ՝ միասնական պետություն ստեղծելու համար։ Հետևաբար Կիլիկիան լինելով մասնատված ֆեոդալական մանր իշխանությունների երկիր, հիմնականում կառավարվում էր տեղական՝ գավառական դատարաններով և վարչական այլ օրգաններով։ Տեղական դատական օրգաններ էին հանդիսանում իշխանների դղյակների կամ իշխանաց իշխանների վարչական կենտրոնների վերին ատյանները։ Բացի այդ, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում տեղական դատական օրգանների դերն էին կատարում նաև Եպիսկոպոսական թեմերի՝ առաջնորդարաններին կից գործող հոգևոր ատյանները։ Հայտնի է, որ Ներսես Շնորհալին իր նշանավոր «Թուղթ ընդհանրականում» դիմում է թեմերի և վանքերի առաջնորդներին՝ արդարադատ լինելու իրենց հպատակների և ցածր հոգևորականության նկատմամբ[1]։ Արդարադատ լինելու քարոզներով հանդես են եկել նաև XII դարի հեղինակներ Սարգիս Շնորհալին[2], Գրիգոր Մարաշեցին[3] և այլն։

Եկեղեցական կանոնական որոշումները իրավական նորմերի նշանակություն են ստանում այն ժամանակ, երբ բացակայում են պետական մասշտաբի դատաստանագրքերը։ Սակայն, մեզ հայտնի է նաև մի հանգամանք, որ եկեղեցական կանոնները բավարար չեն եղել նոր միջավայրում կարգավորելու նոր հասարակական հարաբերությունները։ Դրանով պետք է բացատրել, ինչպես Ներսես Լամբրոնացին է ասում, քաղաքացիական և զինվորական օրենքի թարգմանության անհրաժեշտությունը[4]։

XI դ. վերջին, սկսած խաչակիր արշավանքներից, հայկական իշխանությունները և հայերը հաղորդակից են լինում արևմտա-եվրոպական ֆեոդալական հարաբերություններին։ XII դ. ընթացքում հայկական իշխանությունները առևտրական և ռազմական հարաբերությունների մեջ են մտնում Սիրիայում ստեղծված խաչակիր՝ Երուսաղեմի թագավորության և նրա ենթակա՝ Տրիպոլիի, Եդեսիայի և Անտիոքի իշխանությունների հետ։

---

[1] «Թուղթ ընդհանրական», 1865 թ.։

[2] Մատենադարանի ձեռագիր № 1318, էջ 19—40։

[3] Մատենադարանի ձեռագիր № 1718, էջ 100—110։

[4] Քաղաքային օրենք Ներսիսի Լամբրոնացւոյ, հրատարակեց Կ. Բասմաճյան, 1909, Փարիզ։

թագավորության և մյուս երեք իշխանություններում գործող այլ տիպի ատյանների համար կազմված էին առանձին օրենսգրքեր[38]։

Այդ երկու փաստաթղթերի միջև եղած մյուս հիմնական տարբերությունը այն է, որ եթե Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում կոնկրետ օրենքներ են մշակված յուրաքանչյուր դեպքի համար, ապա Երուսաղեմի ասսիզների հոդվածները օրենքներ չեն, այլ դատավորների կողմից արձանագրված դեպքեր են և որոշ դեպքերի առթիվ կիրառված օրենքների մշակումներ, որոնք պատճառաբանված են իրավական փաստարկներով կամ դեպքերի վկայակոչումներով։ Այստեղ չեն բացատրված օրենքները։ Հետևապես այդ օրենքները ընդհանրացումներ չեն, այլ միայն փորձի հիման վրա նշված իրավական որոշ նորմեր։ Այստեղ նկարագրվում է Երուսաղեմի թագավորության ներքին քաղաքական ու վարչական սիստեմը, որտեղ բոլոր ֆեոդալների իրավունքներն ու պարտականությունները կապված են ֆեոդի հետ, ընդ որում թագավորը հանդես է գալիս որպես ֆեոդալների գլխավոր սյուզերենը՝ առաջինը հավասարների մեջ։ Մինչդեռ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում արտացոլված են Կիլիկիայի ֆեոդալական հասարակության քաղաքական, հասարակական, վարչական ու տնտեսական կյանքի համարյա բոլոր կողմերը։ Սմբատի հիմնական նպատակն է եղել ամրապնդել ֆեոդալների փոխհարաբերությունները, ուժեղացնել թագավորի հեղինակությունը, ամրապնդել կենտրոնական իշխանությունը։ Անշուշտ Սմբատը այդ անում էր ելնելով Կիլիկիայի ներքին և միջազգային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների անհրաժեշտությունից, երբ XIII դ. երկրորդ կեսից մի կողմից՝ գնալով ուժեղանում էր Եգիպտոսի մամլուքների վտանգը, իսկ մյուս կողմից՝ ֆեոդալական երկպառակությունները սպառնում էին մասնատել երկրի դիմադրողական ուժերը արտաքին թշնամու նկատմամբ, դրանով հարցականի տակ դնելով թագավորության գոյությունը։

Այսպիսով, Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը ամբողջական մի երկ է, որտեղ արտահայտված են Կիլիկիայի հայկական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների բոլոր կողմերը։

Դ. Սենյորական, պարոնական կամ գավառական դատարաններ (դարաս)

Կիլիկիան բաժանված էր շրջանների՝ գավառների կամ պարոնությունների։ Յուրաքանչյուր շրջան ուներ իր կառավարիչը՝ գավառապետը կամ պարոնը։ Վերջինս տվյալ շրջանի հողատեր ֆեոդալն էր և լինելով այդպիսին, հանդիսանում էր թագավորի վասալը և վերջինիս նկատմամբ կատարում էր վարչական, տնտեսական և ռազմական պարտականություններ, կառավարելով իրեն հանձնված շրջանի գործերը, այդ թվում և դատական գործերը[39], որոնք հատկապես վերաբերում էին սենյորի և վասալի միջև կամ թե շրջանի բնակչության տարբեր դասակարգերի և խավերի միջև ծագած վեճերին[40]։

Սմբատի Դատաստանագիրքը բազմաթիվ հոդվածներով սահմանում էր պարոնի կամ գավառապետի իրավունքները իր կառավարած շրջաններում՝ նրա

38 Նույն տեղում, էջ 777—782։

39 V. Langlois, Essai..., էջ 48։

40 Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 81—83։

Ինչպես նկատեցինք, նախորդ շրջանում ֆեոդալական հարաբերությունների զարգացման պայմաններում անհրաժեշտություն էր զգացվում սոցիալ-տնտեսական կարգերը արտացոլող ու կարգավորող մի օրենսգրքի ստեղծման։ Լևոն Բ թագավորը, երբ երկրում սկսեց անցկացնել տնտեսական, քաղաքական և վարչական ռեֆորմներ, իր տեսադաշտից հեռու չէր կարող պահել դատարանների կարգավորման հարցը։ Սակայն մենք վկայություններ չունենք այս շրջանում գործող իրավական նորմերի մասին, թեև մի ոմն «Կիլիկիայի ժամանակագրի» մասին վկայակոչում է Ղևոնդ Ալիշանը գրելով, որ «Սա (Լևոն Բ) ետ Դատաստանագիրք հաստատել ձեռամբ և որ գրէ թէ Լևոն թագաւոր յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի»[8]։ Թեև ուրիշ վկայություններ մեզ չեն հասել այդ մասին, սակայն հավանական է, որ Կիլիկիայում գործել է մեզ մինչև այժմ անհայտ մի օրենսգիրք, որի մասին է վկայում նաև Սմբատ Սպարապետը իր Անտիոքի ասսիզների թարգմանության Թ գլխի Բ մասում՝ «Վասն գիտի գրաստու կորուսելոյ» հոդվածում։ «Առնու տէրն գինքն երկրին Անսիգովն և Անտաքոյսն»՝ թագավորի օծության փաստաթղթում խոսվում է «սովորական իրաւանց» մասին. «Եւ կաթողիկոսն տայ երդնուլ ընտրելոյն (թագաւորին) ի վերա սովորական իրաւանցն»[10]։

Մեզ հասած մի ուրիշ վկայության համաձայն ֆեոդալական հողատիրոջ այրի կնոջ կամ իշխանուհու եկամուտները կարգավորվում էր ըստ ֆրանկ օրենսդրության։ Դա վերաբերում է Հեթում Ա թագավորի դուստր Ֆենիայի կալվածքներից ստացած եկամուտներին, որոնք վերջինիս շնորհված էր մեծ արտոնություններով[11]։ Սա նման է Անտիոքի ասսիզների Զ գլխում, «Յաղագս խնամութեան լիճ ճորտուն ընդ այրի կնիկ կամ ընդ կոյս աղջկին» հոդվածում նախատեսած օրենքներին[12]։ Այսպես է հարցը դրված նաև Երուսաղեմի ասսիզներում[13]։

Որ Անտիոքի ասսիզները օգտագործվում էր Կիլիկիայի հայկական թագավորությունում որպես ֆեոդալական հողատիրության, սենյորի և վասալի իրավական հարաբերությունները կարգավորող օրենսգիրք, այդ երևում է նրա թարգմանության առթիվ Սմբատ Սպարապետի գրած առաջաբանից, որտեղ ասված է. «Եւ ես (Սմբատ) աշխատեցայ. և փոխեցի ի հայ լեզուս, և արդ վասն զի սովորութեամբ այն անդիսովն կու գնայր ազգս մեր և դարպասս Հայոց, և սղալումն ինչ կուգայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւնք ոգոյ...»[14]։ Երկրորդ կարևոր ապացույցը, ինչպես նշել է Ղ. Ալիշանը, այն է, որ արևմտյան լեզուներում «Assises» ասսիզներ բառը հոգնակի են օգտագործում, իսկ Սմբատի կողմից ասսիզ և Անսիզ բառերի եզակի թվով օգտագործումը ցույց է տալիս, որ բառը վաղուց է մուտք գործել Կիլիկյան հայերենում, որը իր հերթին, ցույց է տալիս Ասսիզների օգտագործումը որպես իրավագիտական երկ[15]։

---

8 Նույն տեղում, էջ 548։

9 Assises d'Antioche, 1876. Introduction, p. 3.

10 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 475։

11 V. Langlois, Essai historique et critique sur la constitution de la petite Armenie, St. Petersbourg, 1861, p. 51.

12 Assises d'Antioche, p. 19—21.

13 Assises de Jérusalem, Paris, 1841—1843.

14 Assises d'Antioche, 1876, Introduction.

15 Ղ. Ալիշան, «Բազմավէպ», 1876, էջ 322։

1331 թ. ոմն Սարգիս կրչի ձեռքով արտագրված օրինակի հիշատակարանում ասված է, որ «Անտիոքի Ասսիզներին» այդ օրինակը ինքը արտագրել է հայոց թագավոր Օշինի պատվերով, ավելացնելով, որ «որք աւգտիք ի սմանէ կամ աւրինակէք յիշեցէք ի բարին Քրիստոս զամենաբարի թագաւորն Հայոց զՀեթում» (Հեթում Բ)[16]։

Վերևում ասվածից պարզ երևում է, որ Անտիոքի ասսիզները օգտագործվել են Կիլիկիայի հայկական պետության դատարաններում որպես ֆեոդալական հարաբերությունները կարգավորող օրենսգիրք։ Մինչև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի կազմվելը, վերոհիշյալ օրենսգիրքը եկեղեցական կանոնական որոշումների հետ միասին օգտագործվել են Կիլիկիայում և մյուս այլ իրավական աղբյուրների հետ միասին հիմք են հանդիսացել Սմբատի Դատաստանագրքի ստեղծմանը։ Հետևաբար այդ երկու փաստաթղթերը մեծ նշանակություն են ունեցել հայ պետականության կյանքում և Սմբատ Սպարապետի կազմած Դատաստանագրքի հետ միասին Էնգելսի արտահայտությամբ հանդիսացել են այն ասսիզները, որոնց մեջ իրենց բացառիկ արտահայտությունն են գտել Կիլիկիայի թագավորության ֆեոդալական հարաբերությունները[17]։

Ասսիզներում և Սմբատի Դատաստանագրքում արտացոլված են ֆեոդալական դասակարգի հիերարխիայի դասային ու դասակարգային փոխհարաբերությունները։ Այստեղ նշված են այն բոլոր արտոնությունները, որոնցից օգտվել են իշխող դասակարգերը, ընդգծված է նաև Կիլիկիայի ֆեոդալական հասարակության հիերարխիկ բնույթը։ Ընդ որում այդ ֆեոդալական հիերարխիայի իշխող դասերի ամբողջ ծսներությունը ընկնում էր ճորտ և կախյալ գյուղացիության ուսին, որի հիմքում ընկած էր հողի նկատմամբ ֆեոդալի լրիվ սեփականությունը և ոչ-լրիվ սեփականությունը՝ կախյալ գյուղացիության նկատմամբ[18]։

Ա. Արքունի դատարան՝ վերին կամ մեծ դարպաս

Այս մասին առաջին վկայությունը գտնում ենք Ներսես Լամբրոնացու Լևոն Բ թագավորին ուղղված նամակում, որտեղ գրված է. «եթէ իրաւացուցանէ քո արքունի ատեանդ՝ առանց քննելոյ և դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ զնոյն որպէս Քրիստոսի աթոռակցութիւն»[19]։

Այնուհետև արքունի ատյանի մասին բազմաթիվ անգամ հիշատակվում է այն առևտրական շնորհագրերում, որոնք սկսած 1201 թ. մինչև թագավորության վախճանը, Կիլիկիայի թագավորների կողմից տրվում էին օտար վաճառականներին։ Վերոհիշյալ փաստաթղթերի մեծ մասում այդ ատյանը կոչվում է

---

16 Լ. Խաչիկյան, XIV դարի հայ ձեռագրաց հիշատակարաններ, էջ 192—193։

17 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 29, стр. 394.

18 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 7, стр. 356.

19 Ներսիսի Լամբրոնացւոյ Թուղթ առ Քրիստոսազօր իշխողն մեր Լևոն ի նուաստ Ներսիսէ, որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյ պաշտոնեայ, 1865, Վենետիկ, էջ 214։

«regalis curia»[20], կամ արքունի դիւան[21]։ Սա նույն «Curia regis»—արքունի ատյանն է, որը թագավորության առաջին շրջանում հանդես էր գալիս միևնույն ժամանակ որպես թագավորական խորհուրդ։ Հետագայում XIII դ. ընթացքում, երբ ուժեղացավ թագավորական իշխանությունը, այդ ապարատի ֆունկցիաները սահմանափակվեցին և ատյանը դադարեց թագավորական խորհուրդ լինելուց, կատարելով միայն դատարանի դեր։ Դա նման էր XII դ. անգլիական արքունիքում գործող արքունի ատյանին, որտեղ թագավորն էր նախագահում, բայց նման չէր Երուսաղեմի թագավորության մեջ գործող պարոնների ատյանին, որտեղ թագավորը առաջինն էր հավասարների մեջ[22]։ Սմբատը իր Դատաստանագրքում որոշ չափով սահմանափակում է թագավորի իրավունքները իր վասալ իշխանների վասալներին դատելու գործում, միևնույն ժամանակ պահպանելով նրա իրավունքները անմիջականորեն իր վասալ իշխաններին դատելու գործում։ Դատաստանագրքում ասված է. «Եւ իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցանել նա ինքն կարէ ձգել, երբ ու կամի յիշխանութենէն և խրատել ու այնել զինչ իր պիտի. բայց զայս ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան զրել, նա չկարէ առանց այլ իշխանաց, որ իր ընկերք լինին՝ ոչ զնա աքսորել և ոչ ձգել»[23]։ Այս վերջին մասը Երուսաղեմի թագավորությունում գործող իրավական նորմերի ազդեցության արտահայտությունն էր Կիլիկիայի պետական և քաղաքական կարգերի վրա։

Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածից երևում է, որ վերին կամ մեծ դարպասի նախագահն էր թագավորը, իսկ նրա բացակայության դեպքում կամ իշխանաց իշխանի ճորտերին վերաբերյալ հարցերը քննելիս նախագահում էր իշխանաց իշխանը։ Այդ մասին ասված է. «Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսովն, նոյնպէս և զաղատքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն՝ նա իրենցովն զիրենք դատեն իշխանաց իշխանքն, զթագաւորին ճորտերն՝ (վասալներն) թագաւորին հրամանաւք», ապա նույն տեղում «և այն որ իշխանաց իշխան լինի՝ նա դատէն զինք իշխանաց իշխանաւքն»[24]։

Այստեղ հետաքրքիր է մի մոմենտ, որ ի տարբերություն Երուսաղեմի թագավորության «Ասսիզների», որտեղ իշխանները իրավունք են ունեցել դատել թագավորին, Կիլիկյան Հայաստանում թագավորին կարող էր դատել այն ատյանը, որին մասնակցում էին ուրիշ թագավոր, իշխաններ, ամբողջ ժողովրդի հայրապետը, վերջինիս նախագահությամբ[25]։

Այնուհետև, Սմբատի Դատաստանագրքում նշված են արքունի ատյանի՝ վերին կամ մեծ դարպասի իրավունքները, ընդ որում նրա իրավասության տակ էր գտնվում թագաժառանգին հաստատելու, արքունական տիրույթների ժառանգությունը կարգավորելու, առանց թագավորի թույլտվության բերդ կամ քաղաք շինելու դեպքում իշխաններին դատելու, թագավորի, իշխանաց իշխանի և իշխանների միջև պատերազմի ժամանակ ձեռք բերված ավարը բաժանելու ժամանակ ծագած վեճերը կարգավորելու, պետական դավաճաններին պատժե-

[20] V. Langlois, De trésor des chartes d'Armenie, Venise, 1863, pp. 106. 110, 145.

[21] Նույն տեղում, էջ 154, 157։

[22] Encyclopedia Britanica, tome 6, p. 778. 1946.

[23] Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 81—82, 1958, Երևան։

[24] Նույն տեղում, էջ 81—82։

[25] Նույն տեղում, էջ 7—8, 9—13, 68—69, 82։

լու, թագավորի քրիստոնյա և իսլամ հպատակների միջև եղած քրեական գործերը քննելու հարցերը, գավառապետների կամ իշխանների կողմից գավառներից գանձված հարկերը առանց թագավորի գիտության ավելացնելու դեպքում նրանց պատժելու, հողի ընդերքի հարստություններից օգտվելու համար սահմանված կարգը խախտողներին պատժելու, թագավորի վասալներին դատելու, թագավորի եկամուտները հսկելու, արքունիքում գործակալությունների կողմից կարգը խանգարելու դեպքում նրանց պատժելու իրավունքը[26] և այլն։

Բացի այդ արքունի ատյանի վերին կամ մեծ դարպասի իրավունքին էր վերապահված դատելու թագավորի հպատակի և օտարականի միջև առաջացած վեճերը, եթե դրանք չէին հարթվում Սսի արքեպիսկոպոսական ատյանում։ Այսպես, եթե վեճը մի վենետիկցու կամ ճենովացու, սիցիլիացու կամ որևէ մի օտար պետության հպատակի և Կիլիկիայի թագավորության մեջ մտնող ազգությամբ հայ հպատակի միջև էր, բոլոր դեպքերում քննում էր վերին կամ մեծ դարպասը, իսկ որոշ դեպքերում՝ Սսի արքեպիսկոպոսական ատյանը, երբ օտար հպատակը մշտական բնակություն էր հաստատել Կիլիկիայում։ Սիցիլիացիների համար, որոնք մշտական բնակություն չունեին Կիլիկիայում, բոլոր դեպքերում հարցը քննվում էր արքունի ատյանում[27]։

Արքունական ատյանն էր քննում նաև քրեական բոլոր հանցագործությունները, որոնք առնչվում էին օտարահպատակի հետ։ Պատասխանատվությունից խուսափող օտարահպատակի հանցագործության համար պատասխանատու էր Կիլիկիայում ապրող օտարահպատակի համայնքը[28]։

Սիցիլիացիներին տրված 1331 թ. շնորհագրում այդ մասին ասված է. «Եւ թէ Սիծիլուն պակասութիւն անէ ի մեր երկիրս ժողովրդեանն և կամ թախտուն (գահին, այսինքն թագավորական իշխանության դեմ) թէ բուրճէս (քաղաքացի) լնի մեր և կամ բնակիչ երկրի, որ երթա զեն կրածնի ի դարպասն ու կանկտի, և յայտնէ զիւր զենն՝ զոր երեն արած լինին. նայ դարպասն կոչէ ի Սիծիլեանցն լով գտնու ի մեր երկիրս որ կենայ...»[29]։ Եթե պատժված սիցիլիացին մի տարում չհատուցի վնասը «ինչ Սծայեցիք (սիցիլիացիք) կան յերկիրս բռնուին, որ վճարեն զենն զոր արելին Սծիլանքն մեր բնակչացն, զոր կեցնվի ի դարպաս»[30]։

Վերին ատյանը կամ մեծ դարպասը նստում էր Սիս մայրաքաղաքում։ Սակայն օտարի և հայի միջև ծագած վեճերը քննվում էր Այասում, որտեղ և իր նիստերն էր գումարում արքունի ատյանի ֆիլիալը՝ թագավորական պայլի նախագահությամբ[31]։

Բ. Սսի արքեպիսկոպոսական ատյանը

Իր նշանակությամբ երկրորդ կարգի ատյան էր Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը աղբյուրներում կոչվում է «Curia Sisensis Episcopi»[32]։ Այստեղ հիմնականում քննվում էր հոգևորականներին վերաբերող հարցերը և այլազգ-

26 Նույն տեղում, էջ 81—82։
27 V. Langlois, Le tresor... Actes 1201, 1244, 1271, 1307, 1321.
28 Recueil, des historiens des croisades, Documents Armeniens, t. 1, p.
29 «Բազմավէպ», 1847, էջ 92։
30 Recueil des historiens des croisades. Documents Armeniens, t. 1, p. 760.
31 Histoire de Chypre de Mas Latrie, Paris, 1852, 1861, t. II, p. 78.
32 V. Langlois, Essai hist..., p. 48.

ման անձանց միջև ծագած վեճերն ու հանցագործությունները։ Սսի արքեպիսկոպոսական ատյանը նախագահում էր Սսի արքեպիսկոպոսը։

Ը. Ստորին կամ փոքր ատյաններ կամ բուրջեսներ

XIII դ. կեսերից, երբ Կիլիկիայում զարգացավ արտաքին և ներքին առևտուրը ու մեծացավ Կիլիկիայի դերը Մերձավոր Արևելքում կատարվող միջազգային առևտրի ասպարեզում, Սսի արքեպիսկոպոսական ատյանին կից կամ նրան փոխարինելու եկավ Լևոն Դ-ի ժամանակ (1270—1289) թագավորական պայլի ատյանը «Curia ducalis et bailis», որը գլխավորում էր Գունդստաբլ Դուկը (Constabulus ducha)[33], Այասում՝ Այասի կապիտանը։ Դրանցում քննվում էին օտար վաճառականի և հայի միջև ծագած վեճերը։ Այդ ատյանի դատավորները կոչվում էին արքունի պայլեր (baillis royaux)։ Այս դատարանների ֆիլիալները հաստատված էին քաղաքներում և կոչվում էին բուրջեսներ։ Սրանք քննում էին տեղական բնակիչների՝ հատկապես առևտրականների միջև ծագած վեճերը և քրեական հանցագործությունները։ Այս դատարանները նման էին ֆրանկ պետություններում գործող բուրջեսներին, որոնք գլխավորում էին թագավորի կողմից նշանակված օրենսդիրները՝ թագավորի պայլերը կամ դերկոմսերը[34]։

Մեր կարծիքով բուրջեսներում կամ պայլի ատյանում որպես օրենսգրքեր կամ ասսիզներ օգտագործում էին «Անտիոքի ասսիզների» երկրորդ բաժինը, որը ընդգրկում էր ընտանեկան, ժառանգական, ֆինանսական և հատկապես ներքին և արտաքին առևտրի հետ կապված հարցեր[35]։ Անշուշտ XIII դ. երկրորդ կեսին, Անտիոքի ասսիզներին զուգահեռ օգտագործվում էին նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համապատասխան բաժինները[36]։

Ստորին կամ բուրջես դատարանների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր Կիլիկիայի քաղաքների, քաղաքային կյանքի, ներքին և արտաքին առևտրի, արհեստների և տնտեսության զարգացմամբ։ Այս ատյանները նման էին Երուսաղեմի թագավորության մեջ գործող՝ Cour de la fonde (ինչքային-գույքային դատարաններին) և նավահանգիստներում գործող դատարաններին (Cour de la chaine), որոնց գլխավորում էր պայլը կամ նավահանգստի կապիտանը[37]։ Սրանք հիմնականում նոր զարգացող քաղաքային առևտրական բուրժուազիայի դատարաններն էին, որոնք թեև տվյալ քաղաքի կամ շրջանի սենյորին կամ թագավորին էին ենթարկվում, բայց վերջին հաշվով անկախ էին սենյորական վերին ատյանից։ Այստեղ հետաքրքիր է մի հանգամանք. եթե Սմբատի Դատաստանագիրքը իր մեջ ընդգրկում էր և՛ արքունի ատյանի, և՛ սենյորական վերին ատյանի, և՛ բուրջեսների՝ ստորին կամ փոքր և եկեղեցական թեմական ատյանների օրենքները, ապա նույնը չի կարելի ասել Երուսաղեմի ասսիզների մասին, որոնք վերաբերում են միայն պարոնների կամ թագավորական վերին ատյանի գործունեությանը։ Հետևաբար, Երուսաղեմի

---

[33] Histoire de Chypre de Mas Latrie, t. II, p. 78.

[34] Նույն տեղում։

[35] Assises d'Antioche, II բաժին։

[36] Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 119—121։

[37] Enc. Brit., t. 6, p. 780.

XII դ. երկրորդ կեսից հայ և լատին ֆեոդալները ծառայության մեջ էին մտնում Ռուբինյան իշխանաց իշխանների մոտ։ Այդ մասին են վկայում Սմբատ Սպարապետի հիշատակած այն ֆեոդալները, որոնք ներկա են լինում Լևոն Բ-ի թագադրություններ։ Բացի այդ, Սմբատ Սպարապետը ուղղակի մատնացույց անելով ոտար իշխանների մասին, գրում է. «Եւ նա Բեմունդ բրնձին մահուանն բազում դիւսոր եկին ի ծառայութիւն թագաւորին Լեւոնի... որոց անուանքն են այսոքիկ. Ուլիվեր Ջամբրլայն, Ռոճել Տմոնտնա և այլն»։ Հոգևոր աստիճանական օրդենները կախման մեջ են մտնում Ռուբինյան իշխանաց իշխանից։ Ինչպես Լեոնդ Ալիշանն է եզրակացնում, այլ շրջանում, ոտար իշխանները և հոգևորական օրդենները ծառայության մեջ էին մտել հայ Ռուբինյան իշխանաց իշխանների մոտ և սկսած Լևոն Բ-ից «ազնուական օրինաց կապեալ էին ընդ նմայն Երուսաղեմի և Անտիոքի աստիճանների սովորություններով և օրենքներով»։ Այս բոլորը պայմաններ էին ստեղծում խաչակիր ֆրանկ պետություններում գործող իրավական նորմերը Կիլիկյան Հայաստանի տարածքներում մուտք գործելու համար կարգավորելու սենյորների և վասալների փոխհարաբերությունները։

Այսպիսով, XII դ. վերջին Կիլիկիայում, բացի վերոհիշյալ կանոնական և հունա-բյուզանդական օրենքներից, սկսել են գործել նաև խաչակիր ֆրանկ իշխանությունների ֆեոդալական օրենսդրությունները։ Դրանցից հատկապես Անտիոքի աստիճանները անհրաժեշտ էին սենյորի և վասալի փոխհարաբերությունները, ֆեոդալական հողատիրության հարցերը կարգավորելու համար, քանի որ եկեղեցական կանոնական որոշումները և հունա-բյուզանդական իրավունքի նորմերը՝ ներառյալ Լամբրոնացու թարգմանությամբ մուտք գործած քաղաքացիական ու դինվորական օրենքները, չէին կարող բավարարել Կիլիկիայի ներսում զարգացած ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական ու դասակարգային հարաբերությունները։

Իրավունքը և դատարանները XII դ. վերջերից մինչև XIV դ. 70-ական թվականները

Անհամեմատ հարուստ են այս շրջանին պատկանող իրավագիտական աղբյուրներն ու հուշարձանները։ Իհարկե, XII—XIV դդ. ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը հետևանք էր XI—XII դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացմանը, սակայն այս շրջանը հատկանշական է նրանով, որ կայունացվում է Կիլիկիայի հայկական թագավորությունը, հիմք է դրվում թագավորական պետական կարգին, հիմնվում և ձևավորվում են երկիրը կառավարող քաղաքական, վարչական օրգաններ։

Այդ շրջանում գործող իրավունքի հուշարձաններ են հանդիսանում (ըստ ժամանակագրական կարգի) Անտիոքի աստիճանները (Սմբատի կողմից թարգմանվել են 1250-ական թվականներին), 1243 թ. Սսի եկեղեցական ժողովի կանոնական որոշումները և այնուհետև ամենագլխավորը՝ Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը։

---

5 Սմբատ Սպարապետի պատմութիւն, 1856, էջ 100—102։ Սմբատ Սպարապետի Տարեգիրք, 1956, էջ 208—210։

6 Սմբատ Սպարապետի Տարեգիրք, 1956, էջ 211։

7 Ղ. Ալիշան. Սիսուան, էջ 459—460։

ծառայության մեջ գտնվող վասալների նկատմամբ կամ թե բնակչության տարբեր խավերի՝ հորաների (պատիկոսների) և ռամիկների կատարած պարտականությունները սենյորի նկատմամբ։ Բացի այդ որոշվում էր վերջինների կողմից մուծվելիք հարկերի չափը, իսկ թերացման դեպքում նախատեսվում էր պատիժներ, որոնք իրագործվում էին սենյորի ատյանի կողմից[41]։

Բնական է, որ Սմբատը լինելով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պաղպտարախոս, լայն արտոնություններ էր նախատեսում ֆեոդալ իշխանների համար, խիստ ու դաժան էր շահագործվող շինականների ու սարուկների նկատմամբ[42]։ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքին զուգահեռ և դեռևս նրանից առաջ պարոնությունների վերին դարպասում գործադրվում էր նաև նրա թարգմանած «Անտիոքի ասսիզները»։ Այս օրենքները կարգավորում էր սենյորի և վասալի իրավական հարաբերությունները, որի տնտեսական հիմքը կազմում էին ֆեոդը և պարգևը (bénéfice) ֆեոդական և բենեֆիցեալ հողատիրության հիմնական բջիջները։ Այստեղ կարգավորվում է նաև սենյորի կամ վասալի միջև ծագած ունեցվածքային, քրեական, սահմանային, ժառանգական և այլ հարցեր[43]։

Անտիոքի ասսիզները հնարավորություն են ընձեռում վերականգնելու սենյորական դարպասի պաշտոնյաները։ Ըստ այդ օրենսգրքի դարպասի ատենապետները անվանվել են «դիվանքաշիներ» (դատավոր), երդված մարդիկ, այսինքն երդվյալներ կամ ատենակալներ, վերջիններս կոչվել են դիվրնձիք։ Դատարանի գլխավոր պաշտոնատար անձնավորությունը, հավանաբար դատախազը, կոչվել է տուկ, նրա քարտուղարը՝ նոտար տուկին, իսկ դատարանի սուրհանդակը՝ չավուշ, որը միևնույն ժամանակ հանդիսացել է պարոնի կամ շրջանի պայլի սուրհանդակը[44]։ Դատարաններում կողմերի իրավունքները պաշտպանելու համար գործում էին իրավաբաններ։ Սսում արտագրված մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Մեծ իշխան Հեթում Զաւտկանց՝ Սնդեկնոս (հունարեն Սինդիկոս նշանակում է իրավաբան, փաստաբան.— Ս. Ս.) նոյնոյն իշխանին»[45]։

Ե. Հոգևոր, եկեղեցական, թեմական ատյաններ

Ինչպես նշեցինք, Կիլիկիայի իշխանության շրջանում դեռևս շարունակում էին գործել եկեղեցական, թեմական, այսինքն՝ հոգևոր ֆեոդալներին ենթարկվող ատյանները։ Նման աշխարհիկ ֆեոդալներին՝ հոգևոր ֆեոդալները հենվելով իրենց ֆեոդալական հողատիրության իրավունքի վրա դատաստան էին տեսնում և օրենքներ սահմանում իրենց տիրույթների ներսում բնակչության տարբեր խավերի՝ գյուղացիների, ռամիկների, եկեղեցու դեմ ընդվզող աղանդավորների և հերձվածողների նկատմամբ[46]։

---

41 Նույն տեղում, էջ 13—14, 15—16, 94, 128, 148։

42 Նույն տեղում։

43 Assises d'Antioche, 1876, Ա և Բ մաս։

44 Նույն տեղում, էջ 38—39։

45 «Հանդէս Ամսօրեայ», 1898, էջ 247, 1954, էջ 73։

46 Կ. Գանձակեցի, Սահմանք կանոնականք Տեառն Կոստանդեայ Հայոց պաթրիարքի կանոնք ժողովոյն, որ ի Սիս, 1243, էջ 264—292։

Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական որոշումներում նշված է, որ հոգևոր ֆեոդալներին՝ եպիսկոպոսներին և առաջնորդներին ազնվության պետք է հասնեն թագավոր Հեթումը և մյուս իշխանները՝ պատժելու համար հատկապես նրանց, ովքեր անարգում են հավատար և պատկանում են հերձվածողների խմբին[47]։

Սսի եկեղեցական ժողովի կանոնական որոշումները (որոնք թեև մշակվել էին ամբողջ Հայաստանի և Կիլիկիայի հայկական թագավորության եկեղեցական թեմական ատյանների համար) գործադրվեցին հատկապես Կիլիկիայում, որտեղ ուժեղ էր թագավորական իշխանությունը։

Սմբատի Դատաստանագրքի առաջաբանում նշված է, որ Դատաստանագիրքը գրվել է նաև «Վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ»։ Հետևաբար Սմբատի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները օգտագործվելիս են եղել եկեղեցական, թեմական, եպիսկոպոսական և առաջնորդական ատյաններում[48]։

Սսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոններում և Սմբատի Դատաստանագրքի եկեղեցական ատյաններին վերաբերող բազմաթիվ հոդվածներում կան օրենքներ և կանոններ, որոնք բացի եկեղեցական և վանքական ու կրոնական հարցերին վերաբերող պրոբլեմներից, կարգավորում են նաև քաղաքացիական իրավունքի զանազան հարցեր, որոնք ունեն քաղաքական և սոցիալական մեծ նշանակություն Կիլիկյան Հայաստանի, ինչպես տնտեսական կյանքի, այնպես էլ սոցիալ-դասակարգային հարաբերությունների պարզաբանման համար։ Վերոհիշյալ փաստաթղթերում գրանցված կանոններն ու օրենքները դուրս են գալիս ֆեոդալական եկեղեցու շահերը շոշափելու շրջանակներից և ստանում են քաղաքացիական պարտավորությունների ուժ, տույժի, տուգանքի և հարկադիր աշխատանքների ենթարկելով ոչ միայն հանցապարտ հոգևորականներին, այլև աշխարհականներին, հատկապես գյուղացիներին։

Սակայն հետաքրքիր է նշել մի հանգամանք, որ Սմբատը Դատաստանագրքի ՃՂ հոդվածում, որը վերնագրված է «Վասն դատաստանաց և կանոնաց», որոշ սահման է անցկացնում և տարբերություն է դնում աշխարհիկ դատարանների օրենքների խիստ պատժող դերի և եկեղեցական ատյանների կանոնների ավելի շատ խրատող ապաշխարության միջոցով պատիժներ սահմանող օրենքների միջև[49]։ Մեր կարծիքով Սմբատը հանդել էր այդ եզրակացության, այն պատճառով, որ նա այդ Դատաստանագիրքը գրել էր Կիլիկիայի Հայկական թագավորության կենտրոնացված իշխանության պայմաններում, որն կենտրոնացած ապարատով հիմնականում իր ձեռքում էր պահում շահագործող դասակարգերին զսպելու և պատժելու ֆունկցիան։ Շատ բնական է, որ այս պայմաններում եկեղեցական ատյաններին մնում էր ավելի շատ հանդես գալ խրատողի և հաշտեցնողի դերում[50]։ Նույնիսկ օրինադանց հանցագործ եպիսկոպոսներին ու առաջնորդներին նախատեսվում էր դատել պարոնի ատյանում[51] և ոչ թե Սսի արքեպիսկոպոսական կամ եկեղեցական ատյաններում։

---

47 Նույն տեղում, էջ 292։

48 Ս. Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 20, 21, 23, 24, 25, 28, 29, 33—39, 76—83։

49 Նույն տեղում, էջ 61—63։

50 Նույն տեղում, Վ. Ութերունի «Քան ի յայտնութեան», 1875, էջ 55։

51 Նույն տեղում, էջ 22—23։

Եկեղեցական ատյաններում հիմնականում քննում էին բնակչության կենցաղին վերաբերող գործերը[52], հոգևորականության ժառանգության[53], հոգևոր ֆեոդալների օգտին գանձվող տասանորդի և այլ հարկերը մուծելու կարգը խախտողների գործերը[54], ցածր հոգևորականների կատարած հանցագործությունները[55], ակամա հանցագործությունները՝ սպանությունները և այլ հարցեր։

Հոգևոր հիերարխիայի բարձր աստիճանում կանգնած հայրապետը կամ կաթողիկոսը ուներ բավականին մեծ լիազորություն, ընդ որում նա գլխավորում էր հանցագործ թագավորին դատող գերագույն ատյանի նիստերը, որը ըստ Սմբատի Դատաստանագրքի «օրինադրակից է թագավորին և Աստուծոյ»[56]։

* * *

Բացի վերոհիշյալ դատարաններից ու ատյաններից, առանձին պայմանագրերով, օտար առևտրականներին և արհեստավորներին թույլատրվում էր ունենալ իրենց դատարանները[57]։ Կիլիկիայի արքունի հրովարտակներից իմանում ենք, որ ջենովացիներն ու վենետիկցիները, որոնք բնակություն էին հաստատել Սսում, Տարսոնում, Մամեստիայում և Այասում, ունեին իրենց հյուպատոս կոնսուլները, միևնույն ժամանակ թագավորի արտոնությամբ թույլ էր տրված ունենալ իրենց դատարանները՝ կուրիաներ (curiae) կամ պայլական կամ կոնսուլական դատարաններ։ Վերջիններս քննում էին տվյալ գաղութի բնակիչների միջև ծագած վեճերը և նրանց կողմից կատարված հանցագործությունները։ Դատարան ունենալու իրավունքի դիմաց նրանք պարտավոր էին հավատարիմ մնալ թագավորի հանդեպ, պաշտպանելով վերջինիս շահերը իրենց ամբողջ կարողությամբ[58]։

Դատարաններ ունենալու իրավունք ստացան նաև Կիլիկիայում հաստատված Կիլիկյան թագավորի վասալներ՝ հյուրընկալները իրենց ենթակա ամբողջ տերիտորիայում դատ անելու «Omne jus per terram» իրավունքով[59]։

Արքունի հրովարտակներն ու արտոնագրերը մեզ հաղորդում են հետաքրքիր տեղեկություններ Կիլիկիայում գործող միջազգային իրավունքի նորմերի մասին։ Այսպես՝ օտար քաղաքացիների ունեցվածքի ժառանգության հարցը կարգավորելու օրենքը. Ֆրանսիայում և առհասարակ միջնադարյան Եվրոպայում հայտնի է (droit d' aubaine) «Օտարականի ժառանգություն» անվամբ և եկրորդ՝ նավարեկության օրենքը (droit de bris)։ Առաջինը վերաբերում է այն սովորության, որը գործում էր միջնադարյան Եվրոպայի և Ասիայի բոլոր երկրներում, ըստ որի եթե օտարահպատակը մեռնում էր որևէ մի այլ երկրի տերիտորիայում, ապա նրա ունեցվածքը ժառանգում կամ յուրացնում էր տվյալ երկրի սուվերենը։ Այդ օրենքը առաջին անգամ վերացվել է Կիլի-

52 Նույն տեղում, էջ 20, 21, 25, 28, 29, 33—39։
53 Նույն տեղում։
54 Կ. Ղանձակեցի, Պատմութիւն, էջ 292—293.
55 Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 31, 39, 83
56 Նույն տեղում, էջ 81—82։
57 V. Langlois, Essai, p. 48—49.
58 V. Langlois, Le trésor.... p. 106—112.
59 V. Langlois, Essai, p. 48.

կիայում, ընդ որում Կիլիկիայի թագավորը առևտրական շնորհագրերում պաշտոնապես հրաժարվում է օգտվել այդ բարբարոս օրենքից Ջենովայի և Վենետիկի հպատակների նկատմամբ[60]։ Սակայն այդ օրենքը մնում էր ուժի մեջ մյուս օտարահպատակների համար։ Հետագայում՝ 1285 թ. այդ առանձնաշնորհումը ստացան նաև Եգիպտոսի սուլթանության հպատակները[61]։

Ինչպես ասացինք, երկրորդ օրենքը վերաբերում էր նավաբեկությանը։ Նավաբեկության ենթարկվող նավերի ապրանքները, որոնց ծովի ալիքները նետում էին մերձավոր ծովափը, այսինքն՝ օտար պետության տերիտորիան, գրավվում էին տվյալ ծովափի վրա տիրակալություն կատարող թագավորի կողմից։ Երուսաղեմի ասսիզները խափանել էին այդ օրենքը[62]։ Կիլիկիայի Լևոն Բ թագավորը նույնպես հրաժարվում է այդ իրավունքից Ջենովայի և վենետիկյան նավերի նկատմամբ, սակայն մյուս երկրների նավաբեկվողները չէին օգտվում այդ օրենքից[63]։

Կիլիկիայի հայկական պետության օրենքներով, օտարահպատակի կողմից կատարված որևէ մի հանցանքի համար պատասխանատու էր ամբողջ համայնքը, որին պատկանում էր հանցագործ օտարականը։ Հատկապես այդ օրենքը խիստ կիրառվում էր այն համայնքի նկատմամբ, որի անդամը զբաղվում էր մաքսանենգությամբ[64]։

Կիլիկիայում գործում էին նաև միջազգային իրավունքի այլ նորմեր, ինչպիսիք են, օրինակ՝ թագավորը թույլ էր տալիս օտարներին զբաղվելու ստրկավաճառությամբ երկրի ներսում և երկրից դուրս[65]։

Վիլեբրանդ Օլդենբուրգցին հաղորդում է նաև մի այլ օրենքի մասին, որի համաձայն օտարները իրավունք չեն ունեցել ազատ շրջագայելու Կիլիկիայի ներսում կամ ժամանելու նավահանգիստները, կամ թողնելու երկրի սահմանները առանց թագավորի թույլտվության[66]։ Վերոհիշյալ օրենքի մասին նշված է նաև Ջենովայի և վենետիկյան վաճառականներին շնորհված առևտրական արտոնագրերում, որտեղ թագավորը նրանց հատուկ արտոնություններ է տվել ժամանելու և շրջագայելու երկրում[67]։

Կիլիկայում գործելիս են եղել նաև միջազգային իրավունքին վերաբերող բազմաթիվ այլ օրենքներ, որոնք մեզ չեն հասել այն պատճառով, որ Կիլիկյան արքունիքի արխիվը մի քանի անգամ այրվել ու կործանվել է ներխուժող թշնամու կողմից։

Այսպիսով, Կիլիկիայի հայկական պետության մեջ գործող դատարանները, իրավական նորմերն ու միջազգային իրավունքի օրենքները ցույց են տալիս, որ Կիլիկիան այդ ժամանակաշրջանում եղել է ֆեոդալական կազմակերպված մի պետություն, իր բազմաթիվ և բարդ պետական ապարատով։

---

[60] V. Langlois, Le tresor..., p. 106—112, 158.
[61] V. Langlois, Essai hist., p. 52.
[62] Pardessus, Lois maritimes, t. III, p. 531.
[63] V. Langlois, Essai hist..., p. 52.
[64] V. Langlois, Le tresor,..., p. 107.
[65] Նույն տեղում։
[66] V. Langlois, Essai..., p. 51—52.
[67] V. Langlois, Le tresor, p. 106—107, 109—112.

С. В. Борназян

О СУДАХ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ И НЕКОТОРЫХ НОРМАХ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Резюме

Армянские и иноязычные правовые памятники свидетельствуют, что еще в середине XII века в Киликии, кроме канонических и греко-византийских законов, начали применяться феодальные законодательства государства крестоносцев, которые были необходимы для упорядочения развивающихся в Киликии социально-экономических, классовых отношений феодального общества, взаимоотношений сеньора и вассала, вопросов феодального землевладения. Составленный во второй половине XII века «Судебник» Смбата преследовал цель упорядочения развивающихся внутри страны феодальных отношений, причем основной задачей было укрепление центральной царской власти против растущей межфеодальной розни; показано, что наряду с «Судебником» Смбата продолжали действовать законодательство Антиохийского княжества и церковные каноны.

Затем показана разница между «Судебником» Смбата и «ассизами» Иерусалима. Если в «Судебнике» Смбата охвачены законы различных судов, которые действовали в Киликии, то нельзя сказать то же об «ассизах», которые регламентируют деятельность только дворового суда и суда сеньоров. Второе основное различие между этими двумя документами в том, что если в первом разработаны конкретные законы для каждого случая, то второй состоит из статей, которые не есть законы, а описание прецедентов и разработка на их основе соответствующих законов. Здесь законы не объяснены, а потому представляют собой не обобщения, а только некоторые законодательные нормы.

Затем подробно рассматривается деятельность различных судов Киликийского армянского государства — дворового суда, архиепископского присутствия Сиса, низших судов, специальных судов, имевшихся в гаванях, и церковных судов. В Киликии имелись также специальные консульские присутствия для упорядочения дел общин иностранных купцов и ремесленников. Правом суда пользовались утвердившиеся на территории Киликии иноземные вассалы киликийского царя — орден госпитальеров.

Указы и документы царского двора содержат сведения о нормах действовавшего в Киликии международного права. Одним из международных законов был закон об имуществе или наследстве чужестранцев, согласно которому имущество чужестранца, умершего в стране, становится собственностью суверена данной страны. Этот закон впервые был отменен в Киликийской Армении в отношении подданных Генуи и Венеции, при этом царь Киликии в 1201 и 1215 гг. официально отказывается использовать этот закон. В 1285 г. же привилегию получили подданные Египетского султаната. Второй закон разрешал владельцу суши при-

сваивать товары корабля, потерпевшего кораблекрушение у чужих берегов. В законодательстве Иерусалимского королевства этот закон был отменен. Царь Киликии Левон II отказался от этого права. По закону страны за преступление, совершенное иностранным подданным, несла ответственность вся община, к которой принадлежал преступник. Этот закон с особой строгостью осуществлялся по отношению к той общине, член которой обвинялся в контрабанде. Вильбранд Ольденбургский сообщает и о другом законе, согласно которому иностранцы не имели права свободного передвижения по Киликии, приезда в страну или отъезда из нее без разрешения царя.